

մտադրեց նրան: «Պէտք է իմանալ», կրկնեց դերձակը խիստ ուժով և հեռացաւ:

Բերսենեով իր գործին գնաց և շատ բաւական էր որ իր առաջարկութիւնը այդպիսի հետեանք ունեցաւ: Ինսարով ճանապարհ դրեց նրան մինչև դուռը մի սիրալիր քաղաքավարութեամբ, որ Խուսաստանում քիչ գործածական է. և մնալով մենակ, խնամքով հանեց սիրտուկը և զրադուեց իր թղթերը դարսելով:

VIII

Նոյն օրը երեկոյեան Աննա վասիլեյիւնան նստած էր իր հիւրասենեակում և պատրաստուում էր լաց լինել: Բացի նրանից սենեակում գտնուում էր նրա ամուսինը և մի ոմն Ուվար Իւանովիչ Ստախով, Նիկոլայ Արտեմնովիչի ազգականը, պաշտօնաթող մի կօրնէտ մօտ վաթսուհ տարեկան, մի մարդ, որ չաղու-թիւնից անշարժութեան աստիճանին էր հասել, ունէր քնատ դեղին մանր աչքեր և անգոյն հաստ չրթունքներ՝ դեղին ուռուցիկ դէմքի վրայ: Նա պաշտօնը թողնելու օրից մշտապէս ապրում էր Մոսկուայում այն փոքրիկ դրամազլխի տոկոսներով, որ մնացել էր նրա կնոջից. կինը վաճառական դասակարգից էր: Նա ոչինչ չէր անում և հազիւ թէ մտածելիս լինէր, իսկ եթէ մտածում էլ էր, իր մտքերը պահում էր իր մօտ: Իր կեանքում միայն մի անգամ նա յուզուեց և գործունէութիւն ցոյց տուեց. նա կարգաց լրագիրներում Լօնդօնի համալսարհային ցուցահանդէսում դրած մի նոր գործիքի մասին, որ կոչւում էր «կօն-տրօրօմբարդօն» և ուղեց բերել տալ այդ գործիքը, մինչև անգամ հարց ու փորձ արաւ թէ ուր պէտք է ուղարկել փողերը և ուր գրասենեակի միջոցով: Ուվար Իւանովիչը կրում էր ծխախոտի գոյնի լայնարձակ սիրտուկ և սպիտակ թաշկինակ պարու-նոցի վրայ, ուտում էր յաճախ և շատ, և միայն դժուար դէպքերում, այսինքն ամեն անգամ, երբ նրան հարկաւոր էր որ և է կարծիք յայտնել, դողալով շարժում էր աջ ձեռքի մատները օդի մէջ, նախ բթամատից դէպի ձկոյթը, ապա ձկոյթից դէպի բթա-մատը, դժուարութեամբ արտասանելով. «պէտք էր... մի կերպ... իբր»...

Ուվար Իւանովիչը նստած էր բազկաթոռում պատուհանի մօտ և չնչում էր դժուարութեամբ: Նիկոլայ Արտեմնովիչը խոշոր քայլերով անցողաբժ էր անում սենեակում, ձեռքերը զրպան-ներում դրած. նրա դէմքը անբաւականութիւն էր արտայայ-տում:

Նա վերջապէս կանգ առաւ և շարժեց իր գլուխը։—Այո, սկսեց նա, մեր ժամանակ երիտասարդները ուրիշ կերպ էին կրթուած։ Երիտասարդները իրանց թոյլ չէին տալիս արհամարհել մեծերին։ Իսկ այժմ ես միայն նայում եմ և զարմանում։ Գուցէ անարդարը ես եմ, իսկ նրանք արդարացի։ այդ կարելի է։ Բայց և այնպէս ես ունեմ սեփական հայեացք իրերի վրայ։ ես յիմար չեմ ծնուած։ Ի՞նչ էք կարծում այս մասին, Ուվար Իվանովիչ։

Ուվար Իւանովիչը միայն նայեց նրան և խաղաղեց իր մատները։

—Ելենա Նիկոլանովնային, օրինակ, շարունակեց Նիկոլայ Արտեմովիչը։—Ելենա Նիկոլանովնային ես չեմ հասկանում, այդ ճշմարիտ է։ Նրա համար ես բաւականաչափ բարձր չեմ նրա սիրտը այնքան լայնարձակ է, որ ընդգրկում է ամբողջ բնութիւնը մինչև ամենափոքրիկ հայելախաղին կամ գորտը, մի խօսքով ամեն ինչ, բացի իր հարազատ հօրից։ Շատ լաւ. այդ գիտեմ և չեմ խառնուում Որովհետև այդտեղ կան և ջղեր, և գիտնականութիւն, և թոյլք դէպի երկինք, այս բոլորը մեր մասնագիտութիւնը չէ։ Բայց պ. Շուբին... նա զարմանալի անսովոր արտիստ է, ես այդ մասին չեմ էլ վիճում. սակայն արհամարհել մեծին, մի մարդու, որին նա, որքան էլ լինի, կարելի է ասել, շատ բաներ է պարտական,—այդ, խոստովանում եմ, dans mon gros bon sens, թոյլատրել չեմ կարող։ Ի բնէ ես խոտապահանջ չեմ, չէ. բայց ամեն ինչ չափ ունի։

Աննա Վասիլևնան շփոթուած զանգահարեց, ներս մտաւ սպասաւոր տղան։

—Ինչո՞ւ Պաւել Նակոլլերիչը չէ գալիս, ասաց նա։—Ինչ է այս, չեմ կարողանում բերել տալ նրան։

Նիկոլայ Արտեմովիչը թօթուեց իր ուսերը։—Ի՞նչ հարկ կայ, ասացէք խնդրեմ, բերել տալ նրան։ Ես բոլորովին չեմ պահանջում այդ բանը, մինչև իսկ չեմ ցանկանում։

—Ի՞նչպէս թէ ինչ հարկ կայ, Նիկոլայ Արտեմովիչ։ Նա ձեզ անհանգիստ է արել. գուցէ խանդարել է ձեր բժշկութեան ընթացքը։ Ես ուզում եմ բացատրութիւն ստանալ նրանից։ Ես ուզում եմ խմանալ թէ ինչով է նա ձեզ բարկացրել։

—Ես կրկնում եմ, որ այդ բանը ես չեմ պահանջում։ Եւ ի՞նչ հաճոյք է... devant les domestiques...

Աննա Վասիլևնան թեթեւ կերպով կարմրեց։—Իզուր էք այդպէս ասում, Նիկոլայ Արտեմովիչ։ Երբէք ես... devant... les domestiques... Գնա՛, Ֆէդուչկա, և նայիր տես որ իսկոյն այստեղ բերես Պաւել Նակոլլերիչին։

Սպասաւորը դուրս գնաց:

— Եւ բոլորովին հարկաւոր չէ այդ բոլորը, ասաց Նիկոլայ Արտեմովիչը ատամների արանքով և նորից սկսեց քայլել սենեակում:

— Բոլորովին այդ միտքը չունէի սկսելով իմ խօսքը:

— Ի՞նչ էք ասում, Paul-ը պիտի ներողութիւն խնդրէ ձեզնից:

— Է՛հ, ինչիւն է նրա ներողութիւնը: Եւ ի՞նչ բան է ներողութիւնը: Միայն փրաղա:

— Ի՞նչպէս թէ... նրան պէտք է խրատել:

— Խրատեցէք դուք ինքներդ: Նա ձեզ շուտ կը լսի: Իսկ ես նրանից դժգոհ չեմ:

— Ոչ, Նիկոլայ Արտեմովիչ, դուք այսօր դալուց յետոյ քէֆ չունիք: Մինչև անգամ դուք վերջին ժամանակ ինձ նիհարացած էք երևում: Վախում եմ, թէ մի գուցէ բժշկութիւնը ձեզ չէ օգնում:

— Բժշկութիւնը ինձ հարկաւոր է, նկատեց Նիկոլայ Արտեմովիչը:— Իմ փայծաղը կարգին չէ:

Այդ վայրկեանին ներս մտաւ Շուբին, նա յոգնած էր երևում: Մի թեթև, հաղիւ հազ նկատելի հեղնական ժպիտ խաղում էր նրա շրթունքների վրայ:

— Դուք ի՞նձ էիք ուղում, Աննա Վասիլեւիչա, ասաց նա:

— Այո, ի հարկէ, ուղում էի: Ի՞նչ է սա, Paul, դա սարսափելի է: Ես շատ անբաւական եմ քեզանից: Ի՞նչպէս դու կարող ես արհամարհել Նիկոլայ Արտեմովիչին:

— Նիկոլայ Արտեմովիչը զանգատուել է ձեզ իմ մասին, հարցրեց Շուբին և նոյն հեղնութիւնը պահպանելով շրթունքների վրայ, նայեց Ստախովին: Սա երեսը դարձրեց, շուռ եկաւ և աչքերը ցած դրեց:

— Այո, զանգատուել է: Ես չը գիտեմ թէ ինչով ես դու մեղաւոր նրա առաջ, բայց դու իսկոյն պիտի ներողութիւն խնդրես, որովհետեւ նրա առողջութիւնը այժմ շատ քայքայուած է, և վերջապէս մենք ամենքս երիտասարդ տարիներում պարտաւոր ենք յարգել մեր բարեբաբներին:

Է՛հ, սա էլ լօղիկա է», մտածեց Շուբին և դարձաւ գէպի Ստախովը:— Ես պատրաստ եմ ներողութիւն խնդրել, Նիկոլայ Արտեմովիչ, ասաց նա քաղաքավարի կերպով կիսով չափ դուրս տալով:— Եթէ ես իսկապէս ձեզ վիրաւորել եմ մի բանով:

— Ես բոլորովին... այդ մտքով չեմ, պատասխանեց Նիկոլայ Արտեմովիչը, առաջուայ պէս խոյս տալով Շուբինի հայեացք:

քից։—Սակայն ես յօժարութեամբ ներում եմ ձեզ, որովհետև գիտէք դուք, ես խստապահանջ մարդ չեմ։

—Օ՛հ, այդ բանը ոչ մի կասկածի ենթակայ չէ, ասաց Շուբին։—Բայց թող տուէք հետաքրքրուել, արդեօք յայտնի է Աննա Վասիլևիչնային այն, թէ որն է իմ մեղքը։

—Ոչ, ես ոչինչ չը գիտեմ, նկատեց Աննա Վասիլևիչնան և վիզը երկարացրեց։

—Օ՛հ, Աստուած, շտապով բացականչեց Նիկօլայ Արտեմովիչը։—Քանի անգամ խնդրեցի, աղաչեցի, քանի անգամ ասացի, որքան ինձ ատելի են այս բոլոր բացատրութիւնները և տեսարանները Մի-մի դալիս ես տուն, ուզում ես հանգստանալ,—ասում են. ընտանեկան չըջան, intérieur, եղիր տնարար,—իսկ այստեղ տեսարաններ, անախորժութիւններ, Հանգստութեան մի բոպէ էլ չը կայ։ Ակամայ կը գնաս կլուբ կամ... կամ մի որ և է տեղ։ Մարդը կենդանի է, նա ունի ֆիզիկա իր յատուկ պահանջներով, իսկ այստեղ...

Եւ չը վերջացնելով սկսած խօսքը, Նիկօլայ Արտեմովիչը արագ դուրս գնաց և թրխկացրեց դուռը։ Աննա Վասիլևիչնան նայեց նրա ետեից։—Կլուբ, դառնութեամբ չ՛նջաց նա։—Գուցուր չեա գնում, թեթևօրիկ մարդ։ Կլուբում չը կայ այնպիսին, որին պարզեես սեփական երամակի ձիաները, այն էլ մոխրագոյնը իմ սիրած գոյնը։ Այո, այո, թեթևամիտ մարդ, աւելացրեց նա, բարձրացնելով իր ձայնը։—Կլուբ չէք գնում։ Իսկ դու, Paul, շարունակեց նա տեղից վերկենալով։—չեա ամաչում։ Կարծեմ երեխայ չեա։ Ահա այժմ իմ գլուխը ցաւեց։ Ո՛ւր է Զօհան, չը գիտես։

—Կարծեմ իր սենեակումն է, վերեւում։ Այդ բանիմաց աղուէսը այսպիսի եղանակին միշտ ծածկուում է իր որջի մէջ։

—Դէ, բաւական է, բաւական։—Աննա Վասիլևիչնան ուրոհեց իր շուրջը։—Իմ բաժակը, որի մէջ կայ քերուած խրէն, դու չեա տեսել։ Paul, խնդրեմ, այսուհետեւ ինձ մի բարկացնի։

—Է՛հ, լինչպէս ես կը բարկացնեմ ձեզ, մօրաքոյր։ Տուէք ինձ համբուրել ձեր ձեռքը։ Իսկ ձեր խրէնը ես տեսայ առանձնասենեակում, սեղանի վրայ։

—Դարեան միշտ նրան մոռանում է, թողնում մի տեղ, ասաց Աննա Վասիլևիչնան և հեռացաւ խշխշացնելով իր մետաքսեայ զգեստը։

Շուբին ուզեց գնալ նրա ետեից, բայց կանգ առաւ, լսելով իր ետևում Ուլար Իվանովիչի դանդաղկոտ ձայնը։

—Այդպէս չը պէտք էր քեզ, կաթնակերիդ... ասում էր պաշտօնաթող կօրնէտը ընդհատումներով:

Շուրին մօտեցաւ նրան—Իսկ ինչու այդպէս չը պէտք էր ինձ, յարգոյապատիւ Ուլար Իվանովիչ:

—Ինչու: Դու ջանէլ ես, և յարգիր: Այո:

—Ո՞ւմ:

—Ո՞ւմ: Յայտնի է թէ ում: Ատամներդ ցոյց տուր:

Շուրին ձեռքերը խաչեց կրծքի վրայ:

—Ահ, դուք, խմբական սկզբունքի ներկայացուցիչ, բացականչեց նա,—արդաւանդ ոյժ, հասարակական շէնքի հիմք:

Ուլար Իվանովիչը խաղաղորէր իր մատները—Բաւական է, եղբայր, ինձ փորձանքի մէջ մի գցիր:

—Այ ձեզ, շարունակեց Շուրին, ջանէլ չէ, աղնուական է կ'ասես, բայց նրա մէջ որքան երջանիկ, մանկական հաւատ կայ թագնուած: Յարգել, Բայց դիտէք դուք, տարերական մարդ, ինչ պատճառով է նիկօլայ Արտեմովիչը բարկանում ինձ վրայ: Ձէ որ ես այսօր ամբողջ առաւօտը անցկացրի նրա գերմանուհու մօտ. չէ որ այսօր մենք երեքս երգում էինք՝ «մի հեռանար ինձանից», այ թէ դուք լսէիք: Կարծեմ այս բանը ձեզ հասկանալի է: Երգեցինք մենք, իմ պարոն, երգեցինք,—և ես ձանձրացայ. տեսնում եմ բանը լաւ չէ, քնքշութիւն շատ կայ: Ես էլ սկսեցի երկուսին չարացնել: Լաւ աջողուեց: Գերմանուհին նախ բարկացաւ ինձ վրայ, յետոյ նրա վրայ. ապա նիկօլայ Արտեմովիչը բարկացաւ նրա վրայ և ասաց թէ ինքը միայն տանն է երջանիկ և թէ տունը մի դրախտ է: Իսկ գերմանուհին ասաց որ նա բարոյականութիւն չունի. իսկ ես ասացի գերմանուհուն. Ախ, գերմաներէն. նիկօլայ Արտեմովիչը դնաց, իսկ ես մնացի. նա եկաւ այստեղ, այսինքն դրախտը, իսկ դրախտում նա զղւում է: Ահա և նա սկսեց մրթմրթալ: Դէ հիմա ով է, ձեր կարծիքով, մեղաւորը:

—Ի հարկէ դու, պատասխանեց Ուլար Իվանովիչը:

Շուրին յառեց իր աչքերը նրա վրայ:—Համաձեւում եմ հարցնել ձեզանից, յարգելի ասպետ, սկսեց նա մի շողորորթ ձայնով.—այդ հանելուկային խօսքերը դուք հաճեցիք արտասանել ձեր մոտածողական ընդունակութեան որ և է ըմբռնողութեան շնորհիւ, թէ ունենալով մի վայրկենական ցանկութիւն առաջացնել օդի մէջ մի ցնցում, որ ձայն է անուանւում:

—Փորձանքի մէջ մի գցիր, ասում եմ, հեծեծաց Ուլար Իվանովիչը...

Շուրինը ծիծաղեց և դուրս վազեց:

—էյ, կանչեց, քառորդ ժամ անցած, Ուվար Իվանովիչը։
Իբր... մի բաժակ արագ...

Ծառան բերեց արագ և ուտելիք մատուցարանի վրայ։
Ուվար Իվանովիչը հանդարտ վերցրեց բաժակը մատուցարանից
և երկար, լարուած ուշադրութեամբ նայում էր նրան, կար-
ծեա լաւ չէր հասկանում թէ ինչ է բռնած իր ձեռքում։ Ապա
նայեց ծառային և հարցրեց՝ արդեօք Վասկա չ'է նրա անունը։
Ապա նա վշտալից կերպարանք ընդունեց, խմեց արագը, վրան
մի բան կերաւ և ձեռքը տարաւ որ գրպանից թաշկինակ հանէ։
Բայց ծառան վաղուչ տարել էր մատուցարանն ու չիչը, և
կերել էր տառելիի մնացորդը, նոյն իսկ կարողացաւ քիչ քնել,
քիթը դնելով աղայի վերարկուի մէջ, իսկ Ուվար Իվանովիչը
դեռ բռնած էր թաշկինակը իր առաջ միմնանոցից հեռացրած
մատներով և նոյն լարուած ուշադրութեամբ նայում էր կամ
պատահանին, կամ յատակին և պատերին։

IX

Շուրինը վերադարձաւ իր սենեակը և բաց էր արել մի
գիրք։ Նիկոլայ Արտեմովիչի սենեկապանը զգուշութեամբ ներս
մտաւ և տուեց նրա մի փոքրիկ, եռանկիւնի տոմսակ, որ կըն-
քուած էր խոշոր գինւանշան կրող կնքով։ «Եւս յոյս ունեմ, զըր-
ուած էր այդ տոմսակի մէջ, որ դուք, ինչպէս ազնիւ մարդ,
թոյլ չէք տայ ձեզ նոյն իսկ մի հատ խօսքով ակնարկել մի
մուրհակի մասին, որի վերաբերմամբ խօսք եղաւ այսօր առա-
ւօտեան։ Զեզ յայտնի են իմ յարաբերութիւնները և իմ կանոն-
ները, գումարի ոչնչութիւնը և ուրիշ հանգամանքներ, վերջա-
պէս կան ընտանեկան գաղտնիքներ, որոնց պէտք է յարգել, և
ընտանեկան անդորրութիւնը այնպիսի մի սրբութիւն է, որը
միայն *êtres sans coeurs*-երն են մերժում։ Իսկ ես պատճառ
չունեմ ձեզ այդպիսիների թւում դասելու (Այս տոմսակը վե-
րադարձրէք)։ Ն. Ս.»

Շուրինը ներքեում մատիտով աւելացրեց. «Մի անհան-
գըստանաք, ես առ այժմ գրպաններից թաշկինակներ չեմ գո-
ղանում։ Վերադարձրեց տոմսակը սենեկապանին և նորից
ձեռքն առաւ գիրքը։ Բայց գիրքը չուտով դուրս սողաց նրա
ձեռքերից։ Նա նայեց շառագունած երկնքին, երկու փակել ու-
ժեղ սօճիներին, որոնք միւս ծառերից առանձնակի էին կանգ-
նած, մտածեց. «ցերեկը սօճիները կապտագոյն են լինում, իսկ
երեկոնները սրբիսի վառահեղ կանաչութիւն են ստանում» և
ուղևորուեց գէպի այգին, ունենալով գաղտնի յոյս թէ այնտեղ

կը հանդիպի ելենայինս նա խաբուած չէր: Առջևում, թիւերի մէջ անցնող ճանապարհի վրայ, երևաց ելենայի զգեստը: Շուրթերն հասաւ նրա կտիւղի և գնալով նրա հետ մի շարքում, ասաց.

— Գէպի իմ կողմը մի նայէք, ևս արժանի չեմ:

Ելենան հարեանցի նայեց նրան, հարեանցի ժպտաց և շարունակեց ճանապարհը, դնաց այգու խորքը: Շուրթերն քայլեց նրա կտիւղի:

— Ես ձեզ խնդրում եմ չը նայել ինձ, սկսեց նա— և խօսքի եմ բռնուում ձեզ հետ. հակասութիւնը բացարձակ է: Բայց դա միևնոյն է. առաջին անգամը չէ, որ ևս այսպէս եմ: Ես այս բոլորն յիշեցի, որ դեռ ձեզանից ինչպէս հարկն է ներողութիւն չեմ խնդրել երէկուայ իմ յիմար վարմունքի համար: Դուք ինձ վրայ չէք բարկանում, ելենա Նիկօլանիւնա:

Օրիորդը կանգ առաւ և իսկոյն չը պատասխանեց, — ոչ թէ այն պատճառով որ նա բարկացած էր, այլ որովհետեւ նրա մըտքերը հեռու էին գնացել:

— Ո՛հ, ասաց նա վերջապէս, — ևս բոլորովին չեմ բարկանում:

Շուրթերն կծեց չրթունքը:

— Ո՛րպիսի բաղձահոգ... և որպիսի անտարբեր դէմք, թնթիւնթայ նա: — Ելենա Նիկօլանիւնա, շարունակեց նա, բարձրացնելով ձայնը. — թոյլ տուէք ինձ պատմել ձեզ մի փոքրիկ անեկզօտ: Ես մի բարեկամ ունէի, իսկ այդ բարեկամն էլ մի բարեկամ ունէր, որ սկզբում պահում էր իրան ինչպէս վայել է օրինաւոր մարդուն, բայց յետոյ սկսեց խմել: Եւ ահա մի անգամ, վաղ առաւօտեան, իմ բարեկամը հանդիպում է նրան փողոցում (նկատեցէք, որ նրանք արդէն այլ ևս ծանօթ չէին միմեանց), հանդիպում է և տեսնում, որ նա հարբած է: Իմ բարեկամը ուղղակի երես է դարձնում նրանից: Իսկ նա մօտենում է և ասում. «Ես չէի բարկանայ, եթէ դուք չը բարեկէք, բայց ինչու երես դարձնել: Գուցէ ևս վշտից եմ խմում: Հանգիստ իմ սկոբներին»:

Շուրթերն լսեց:

— Եւ ուրիշ ոչինչ, հարցրեց ելենան:

— Ոչինչ:

— Ես չեմ հասկանում: Ի՞նչ էք դուք ակնարկում: Այս բոլորն ասացիք ինձ որ ևս չը նայեմ դէպի ձեր կողմը:

— Այո, իսկ հիմա ևս ձեզ պատմեցի թէ ինչպէս վատ է երես դարձնելը:

— Միթէ ևս... սկսեց ելենան:

—Բայց միթէ ոչ:

Ելննան թեթի կերպով կարմրեց և ձեռքը մեկնեց Շուրի-
նին: Սա պինդ սեղմնց այդ ձեռքը:

—Թուժ է ձեզ թէ ինձ բռնեցիք մի վատ զգացմունքի
մէջ—ասաց Ելննան—բայց ձեր կասկածը անարդար է: Իմ մըտ-
քով անգամ չէր անցնում խորթանալ ձեզնից:

—Դիցուք թէ այդպէս է: Բայց խոստովանեցէք, որ ձեր
զլխում այս բոլէին հազարաւոր մտքեր կան, որոնցից մէկն էլ
ինձ չէք հաւատայ: Ի՞նչ է, միթէ ես ճիշտ չասացի:

—Գուցէ:

—Ինչիցն է այդ, ինչից:

—Իմ մտքերը պարզ չեն նոյն իսկ ինձ համար, ասաց Ե-
լննան:

—Հէնց այդ պատճառով էլ պէտք է հաւատալ նրանց ու-
րիշներին, վրայ բերեց Շուրին: Բայց ես կ'ասեմ թէ բանը ին-
չումն է: Դուք վատ կարծիք ունիք իմ մասին:

—Ե՞ս:

—Լէ՛ս, դուք Դուք երեակայում էք թէ իմ մէջ ամեն ինչ
կիսով չափ կեղծուած է, որովհետեւ ես գեղարուեստագէտ եմ.
Թէ ես անընդունակ չեմ ոչ միայն որ և է գործի—այդ բանի մէջ
դուք երեւի, ճշմարիտ էք—այլ և ոչ մի իսկական, խոր զգացմուն-
քի. թէ ես անկեղծ կերպով լաց լինել էլ չեմ կարող. թէ ես
չատախօս և բամբասող եմ—և այդ բոլորը այն պատճառով, որ
ևս գեղարուեստագէտ եմ: Եւ ինչ դժբախտ, Աստուծուց սպան-
ուած մարդիկ ենք: Դուք, օրինակ, ես պատրաստ եմ երգուել,
չէք հաւատում իմ զղման:

—Ո՛չ, Պաւել Եակովլևիչ, ես հաւատում եմ ձեր զղման,
ձեր արտասուքներին էլ հաւատում եմ: Բայց ինձ թւում է,
որ ձեր զղումը ձեզ զուարճացնում է, նոյնպէս և արտա-
սուքները:

Շուրինը ցնցուեց:

—Է՛, ես տեսնում եմ որ դա, ինչպէս ասում են բժիշկ-
ները, անբուժելի կազուս է, casus incurabilis: Այդտեղ մնում
է միայն գլուխը շարժել և հնազանդուել: Բայց, Տէր Աստուած,
միթէ դա ճշմարիտ է, միթէ ես միայն ինձանով եմ զբաղուած,
երբ իմ կողքին ապրում է այսպիսի հոգի: Եւ հասկանալ որ
երբէք չեմ մտնի այդ հոգու մէջ, երբէք չեմ ըմբռնի թէ ինչու
է՞նա թախծալից, ինչից է՞նա ուրախանում, ինչ է թախառում
նրա մէջ, ինչ է՞նա ուզում, ուր է գնում... Ասացէք, արտա-
սանեց նա փոքր ինչ լռելուց յետոյ,—դուք երբէք, ոչ մի կերպ,
ոչ մի դէպքում չէ՛ք սիրի գեղարուեստագէտին:

Ելենան ուղիղ նայեց նրա աչքերին:

— Ձեռք կարծում, Պաւել Եակովլեւիչ, ոչ:

— Հէնց այդ էլ պէտք էր ապացուցանել, ասաց Շուրինը մի ծիծաղաշարժ վնասութեամբ:— Այսուհետեւ, ես կարծում եմ ինձ համար աւելի քաղաքավարի բան կը լինի չը խանդարել ձեր մենաւոր զրօսանքը: Պրօֆէսօրը կը հարցնէր ձեզ. ի՞նչ հիմքերի վրայ դուք ասացիք՝ ոչ: Բայց ես պրօֆէսօր չեմ, ես երեսայ եմ, ձեր հասկացողութեամբ. սակայն երեսաներից երես չեն դարձնում, յիշեցէք այս բանը: Մնացէք բարով: Հանգիստ իմ ոսկորներին:

Ելենան ուղում էր կանգնեցնել նրան, բայց մտածեց և նայեց ասաց.

— Մնացէք բարով:

Շուրինը դուրս եկաւ բակից: Ստախօժների ամառանոցից քիչ հեռացած նա հանդիպեց Բերսենեւիին: Սա գալիս էր աշխոյժ քայլերով, գլուխը կախ արած և գլխարկը բաշած գէպի շինքը:

— Անդրէյ Պետրովիչ, կանչեց Շուրինը:

Նա կանգնեց:

— Գնա, գնա, շարունակեց Շուրինը. — ես հէնց այնպէս ձայն տուի, ես քեզ չեմ պահում— ես ուղիղ մտիւր այդին. այնտեղ դու կը գտնես Ելենային: Նա, կարծեմ, քեզ է սպասում... յամենայն դէպս մէկին նա սպասում է... Հասկանո՞ւմ ես դու այս խօսքերի ոյժը. նա սպասում է: Բայց դիտես, եղբայր, ինչ դարմանալի հանդամանք կայ: Երեւակայր, ահա երկու տարի է, ինչ ես ապրում եմ Ելենայի հետ մի տան մէջ, սիրահարուած եմ նրա վրայ, և միայն այժմ, այս րոպէին ոչ թէ հասկացայ նրան, այլ տեսայ: Տեսայ և զարմացայ: Մի նայիր ինձ, խնդրեմ, այդ կեղծ-խայթաւոր հեղինակեամբ, որ չէ գալիս քո լրջամիտ գծերին: Այո, հասկանում եմ, դու ուղում ես ինձ յիշեցնել Աննուշկայի մասին: Եւ ի՞նչ: Ես չեմ հրաժարուում: Մեզ պէս մարդկանց Աննուշկաներն են մատչելի: Ուրեմն կեցցեն Աննուշկաներն ու Զօհաները, նոյն իսկ Աւգուստինա Խրիստիանօֆեաները: Դու այժմ գնա Ելենայի մօտ, իսկ ես կը գնամ... կարծում ես Աննուշկայի մօտ: Ո՛չ, եղբայր, աւելի վատ տեղ— իշխան Զիկուրասովի մօտ: Կայ մի այսպիսի մեկենաս Ղազանի թաթարներից, Վօլգինի նման: Տեսնո՞ւմ ես այս հրաւէրը, այս տառերը. R. S. V. P. *) Գիւղումն էլ ինձ համար հանգստութիւն չը կայ: Addio!

*) Ընթերցանեցէք պատասխանելու խօսքերի սկզբնատառերը Փրանսերէն լեզուով:

Բերսեննովը լսեց Շուբինի ճառը լուռ և կարծես մի քիչ ամաչելով նրա տեղ. յետոյ նա մտաւ Ստախովի ամարանոցի բակը, Իսկ Շուբինը ճիշտ որ գնաց իշխան Զիկուրասովի մօտ և նրան ամենասիրալիք կերպով շատ կծու համարձակ խօսքեր ասաց: Ղազանի թաթարներից դուրս եկած մեկենասը քրքջում էր, մեկենասի հիւրերը ծիծաղում էին, բայց ոչ ոք ուրախ չէր, և երբ ամենքը հրաժեշտ տուին միմեանց, ամենքը շարացած էին: Այսպէս երկու միմեանց քիչ ծանօթ պարոններ, հանդիպելով Նելովի պրօպեկտում, յանկարծ միմեանց առաջ բաց են անում ատամները, քաղցրամկղցր կերպով կծկւում են աչքերը, քիթը և այտերը և իսկոյն, բաժանուկով միմեանցից, ընդունում են իրանց նախկին, անտարրեր կամ տխուր արտայայտութիւնը:

X

Ելննան բարեկամարար ընդունեց Բերսեննովին, բայց ոչ թէ այգում, այլ հիւրասենեակում, և իսկոյն, համարեա անամբերութեամբ, վերանորոգեց երէկուայ խօսակցութիւնը: Նա մենակ էր. Նիկօլայ Արտեմնովիչը կամացուկ թաղնուել էր մի ինչ որ տեղ, Աննա Վասիլեւնան պառկած էր վերիում և գլուխը կապել էր թաց չորով: Զօհան նստած էր նրա մօտ, սարքինկարգին դրստելով իւրկան և ձեռքերը դարսելով ծնկների վրայ. Ուլար Իվանովիչը ննջում էր վերնայարկի մի սենեակում, լայն և յարմար դիւանի վրայ, որ ստացել էր «ինքնանինջ» անունը: Բերսեննովը նորից յիշատակեց իր հօրը. նա սրբութեամբ պաշտում էր նրա յիշատակը: Մենք էլ մի քանի խօսք ասենք նրա մասին:

Ութսուն երկու ճորտերի տէր, որոնց նա ազատեց իր մահից առաջ, իլլիւմինատ, *) Գեօտաինգենի հին ուսանող, հեղինակ ձեռագիր աշխատութեան «Ոգու յեղաբոլորիւնները կամ նախակերպութիւնները աշխարհի մէջ». մի աշխատութիւն, որի մէջ Շեկլինգականութիւնը, Սվետինբորգականութիւնը և հանրապետականութիւնը խառնուած էին ամենատարօրինակ կերպով— Բերսեննովի հայրը բերեց նրան Մոսկուա, նրա մօր մահուանից յետոյ, երբ նա դեռ երեխայ էր և ինքը զբաղուեց նրա կրթութեամբ: Հայրը պատրաստում էր իւրաքանչիւր դասի համար, աշխատում էր անսովոր բարեխղճութեամբ և կատարելապէս ապարդիւն կերպով. նա մտադրազ էր, գրքի մարդ. միտով, խօսում էր դէմ ընկնելով, մի խուլ ձայնով, միտը էր արտայայտում մութ կերպով, պաճուճուած ոճով, աւելի խորթ էր նոյն իսկ իր

*) Այս անունով լալտնի էր մի զաղտնի ընկերութիւն:

որդուն, որին սաստիկ սիրում էր: Զարմանալի չէ, որ որդին միայն բաց ու խուփ էր անում աչքերը նրա դասերի ժամանակ և մազի չափ առաջագիծութիւն չէր ցոյց տալիս: Մերունին (նա մօտ յիսուն տարեկան էր, ամուսնացել էր շատ ուշ) հասկացաւ վերջապէս, որ բանը լաւ չէ գնում և տուեց իր Անդրիւշային գիշերօթիկ դպրոց: Անդրիւշան սկսեց սովորել, բայց ծնողական հակողութեան տակ էր. հայրը այցելում էր նրան անդադար, ձանձրացնում էր դպրոցի տիրոջը իր խրատներով և զրոյցներով. վերակացուները նոյնպէս նեղանում էին անկոչ հիւրից. նա բերում էր նրանց համար ինչ-որ, նրանց ասելով, խիստ խրթին գրքեր կրթութեան մասին: Մինչև իսկ դպրոցական աշակերտներն էլ քաշւում էին, տեսնելով ծերունու մօայլ և ծաղկատար գէմքը, նրա վտիտ կադմուսները, որ միշտ պատած ունէր ինչ-որ սուր փէշերաւոր մոխրագոյն ֆրակով: Աշակերտները այն ժամանակ չը գիտէին որ այդ նօթերը կիտած, երբէք չը մպտող պարտնր, որ կուռնկի քայլուածք ունէր և երկար քիթ—սրտանց ցաւում էր ամեն մէկի համար, համարեա այնպէս, ինչպէս մտածում էր իր սեփական որդու մասին: Նա մի անգամ ուղեց խօսել երեխաների հետ Վաչինգտօնի մասին. «Պատանի սաներ», սկսեց նա, բայց նրա օտարոտի ձայնի առաջին հնչիւններից բոլոր պատանի սաները փախան: Ազնիւ գեօտօրինգնային վարդերի վրայ չէր ապրում. նա միշտ ճշնշուած էր պատմութեան ընթացքի տակ, զանազան հարցերի և խորհրդածութիւնների տակ: Երբ երիտասարդ Բերսենսիլը մտաւ համալսարան, հայրը նրա հետ գնում էր դասախօսութիւնների, բայց ասողջութիւնը սկսել էր դաւաճանել նրան: 48 թուականի գէպքերը *) ցնցեցին նրան հիմնաւորապէս (պէտք էր փոփոխել ամբողջ գիրքը) և նա մնաւ 53 թուականի ձմեռը, չը սպասելով իր որդու համալսարանից դուրս գալուն, բայց վաղօրօք չնորհաւորելով նրա կանդիտատութիւնը և օրհնելով նրան ծառայելու գիտութեան «Տալիս եմ քեզ ջահը»—ստում էր նա մահից երկու ժամ առաջ, «ես կրում էի նրան, որքան կարողացայ, դու էլ ձեռքից չը տաս այս ջահը մինչև վերջ»: Բերսենսիլը երկար խօսում էր Ելինայի հետ իր հօր մասին: Այն անյարմարութիւնը, որ նա զգում էր օրիորդի ներկայութեանը, չքացաւ, և խօսելիս նա այժմ այնքան սաստիկ չէր սփոթանում: Խօսակցութիւնն անցաւ համալսարանին:

—Ասացէք, հարցրեց նրան Ելենան—ձեր ընկերները մէջ կային նշանաւոր մարդիկ:

*) Յեղափոխութիւնները արեմտեան Եւրոպայում:

Բերսենեմը յիշեց Շուքինի խօսքերը:

—Ո՛հ, Երենա Նիկողանֆեա, ճիշտն ասած, մեր մէջ մի հատ նշանաւոր մարդ չը կար: Եւ որտեղից: Եղել է, ասում են, մի ժամանակ Մոսկուայի համալսարանում: Բայց ոչ այժմ: Այժմ դա դպրոց է, ոչ թէ համալսարան: Ինձ համար ծանր էր իմ ընկերների մէջ, աւելացրեց նա, ցածացնելով իր ձայնը:

—Ծանր էր... չնչաց Երենան:

—Սակայն, շարունակեց Բերսենեմը,—ես պէտք է մի բան աւելացնեմ: Ես ճանաչում եմ մի ուսանողի—նա իմ կուրսից չէ. դա, ճիշտ որ, նշանաւոր մարդ է:

—Ի՞նչպէս է նրա անունը, աշխոյժ կերպով հարցրեց Երենան:

—Ինսարով, Դիմիտրի Նիկանօրովիչ: Նա բոլոր է:

—Ռուս չէ:

—Ո՛հ, ռուս չէ:

—Ի՞նչու է նա Մոսկուայում ապրում:

—Եկել է ուսում առնելու: Եւ գիտէք ինչ նպատակով է ուսում ստանում: Նա մի միտք ունի, իր հայրենիքի տղատութիւնը: Եւ նրա ձեկատագիրն էլ անսովոր է: Նրա հայրը բաւական հարուստ վաճառական էր, Տիրնովից: Տիրնով այժմ փոքրիկ քաղաք է, իսկ հին ժամանակները դա Բոլգարիայի մայրաքաղաքն էր, երբ Բոլգարիան անկախ թագաւորութիւն էր: Հայրը առետուր էր անում Սօֆիայում, յարաբերութիւններ ունէր Ռուսաստանի հետ. նրա քոյրը, Ինսարովի հարազատ հօրաքոյրը, մինչև այժմ ապրում է Կիևում, ամուսնացած է՝ այնտեղի գիրնադիայի՝ պատմութեան աւագ ուսուցչի հետ: 1835 թուին, ուրեմն տասնութ տարի սրանից առաջ, տեղի ունեցաւ մի սարսափելի եղեռնագործութիւն. Ինսարովի մայրը յանկարծ անհետ կորաւ. մի շարժից յետոյ նրան դտան մորթուած:

Երենան ցնցուեց: Բերսենեմը կանգ առաւ:

—Շարունակեցէք, շարունակեցէք, ասաց օրիորդը:

—Լուրեր էին պատում, թէ մօրը առեանգել և սպանել էր թիւրք աղան. նրա ամուսինը, Ինսարովի հայրը, իմացաւ ճշմարտութիւնը, ուղեց վրէժ հանել, բայց խէնջարով միայն վիրաւորեց աղային: Նրան հրացանի բռնեցին:

—Հրացանի բռնեցին: Առանց դատաստանի:

—Այն: Ինսարովը այն ժամանակ մտել էր ութ տարեկան հասակը: Նա մնաց հարևանների ձեռքին: Քոյրը իմացաւ իր եղբոր ընտանիքի վիճակը և կամեցաւ իր մօտ ունենալ եղբոր որդուն: Ինսարովին հասցրին Օդեսսա, իսկ այնտեղից Կիևի Կին-

վում նա ամբողջ տասներկու տարի ապրեց Դրանից է որ նա այնպէս լաւ է խօսում ուսներէն:

—Նա խօսում է ուսներէն:

—Ինչպէս մենք ձեզ հետ: Երբ լրացաւ նրա քսան տարին (դա 48 թուականի սկզբումն էր), նա ուզեց վերադառնալ հայրենիք: Եղաւ Սօֆիայում և Տիրնօվում: չըջեց ամբողջ Բօլգարիան աջ ու ձախ, երկու տարի մնաց այ՛տեղ, նորից սովորեց իր մայրենի լեզուն: Թիւրքաց կառավարութիւնը հալածում էր նրան և նա, երևի, այդ երկու տարին մեծ վտանգների էր ենթարկուած. ևս մի անգամ տեսայ նրա վրի վրայ մի լայն սպի, պէտք է որ վերքի հետք լինի. բայց նա այդ մասին խօսել չէ սիրում: Նա էլ իր տեսակի մի լռակեաց է: Ես փորձեցի նրան հարց ու փորձ անել ամեն ինչի մասին—բայց չեղաւ: Պատասխանում է ընդհանուր ֆրազներով: Նա սարսափելի յամառ մարդ է: 50 թուականին նորից եկաւ Ռուսաստան, Մոսկուա, ունենալով նպատակ լրակատար կրթութիւն ստանալ, մօտենալ ուսաներին, իսկ յետոյ, երբ դուրս կը գայ համալսարանից...

—Ի՞նչ կ'անէ այն ժամանակ, ընդհատեց Ելենան:

—Ինչ որ Աստուած կը տայ: Հեշտ չէ առաջուց գուշակել: Ելենան երկար ժամանակ իր աչքերը չէր հեռացնում Բերսնեվից:

—Դուք ինձ շատ հետաքրքրեցիք ձեր պատմութեամբ, ասաց նա: Ի՞նչպիսի տեսք ունի ձեր այդ, ինչպէս անուանեցիք... Ինսարօվը:

—Ինչ ասեմ. իմ կարծիքով, տգեղ չէ: Բայց ահա դուք ինքներդ նրան կը տեսնէք:

—Ի՞նչպէս:

—Ես նրան կը բերեմ այստեղ, ձեզ մօտ: Վաղը չէ, միւս օրը նա կը տեղափոխուի մեր գիւղը և կ'ապրէ ինձ հետ մի բնակարանում:

—Միթէ: Բայց կ'ուզենայ մեզ մօտ գալ:

—Ի՞նչպէս չէ: Նա շատ ուրախ կը լինի:

—Նա հպարտ չէ:

—Նա՞ւ Ամենին: Այսինքն եթէ կամենում էք՝ նա հպարտ է, բայց ոչ թէ այն մտքով, ինչպէս դուք էք հասկանում: Օրինակ, նա փող պարտք չի վերցնի ոչ մէկից:

—Իսկ նա աղքատ է:

—Այո, հարուստ չէ: Գնալով Բօլգարիա, նա հաւաքել է մի քանի փշրանքներ, որոնք մնացել էին հայրական կարողութիւնից, և հօրաքոյրն էլ նրան օգնում է. բայց այս բոլորը չնչին բաներ են:

—Նա, երեկ, ուժեղ բնաւորութիւն ունի, նկատեց Ելենան:

—Այո: Դա երկաթի մարդ է: Եւ մի և նոյն ժամանակ, դուք կը տեսնէք, նրա մէջ կայ ինչ որ մանկական, անկեղծ բան, չը նայած իր մտախոհութեան և նոյն իսկ ձածկամտութեան: Ծշմարիտ է, նրա անկեղծութիւնը մեր անպէտք անկեղծութիւնը չէ, այն մարդկանց անկեղծութիւնը, որոնք ծածկելու ոչ մի բան չունեն... Ահա ես կը բերեմ նրան, սպասեցէք:

—Եւ ամօթխած էլ չէ, նորից հարցրեց Ելենան:

—Ոչ, ամօթխած չէ: Միայն ինքնասէր մարդիկ են ամօթխած լինում:

—Բայց միթէ դուք ինքնասէր էք:

Բերսենեկը չփոթուեց և ձեռքերը լայն բացեց:

—Դուք զրգռում էք իմ հետաքրքրութիւնը, շարունակեց Ելենան:—Ասացէք, նա վրէժ չէ հանել այդ թիւրք աղայից:

Բերսենեկը ժպտաց:

—Վրէժ հանում են միայն վէպերի մէջ, Ելենա Նիկողանով-նա, բացի զբանից տաաներկու տարուայ մէջ այդ աղան կարող էր մեռնել:

—Բայց սակայն պարոն Ինսարովը ձեզ այդ մասին ոչինչ չէ ասել:

—Ոչինչ:

—Ինչու էր նա գնացել Սօֆիա:

—Այնտեղ էր ապրում նրա հայրը:

Ելենան մտածմունքի մէջ ընկաւ:

—Աղատել իր հայրենիքը—ասաց նա:—Այս խօսքերը արտասանել անգամ սարսափելի է, այնքան նրանք մեծ են...

Այդ վայրկեանին սենեակը մտաւ Աննա Վասիլեւիւնան, և խօսակցութիւնը վերջացաւ:

Օտարոտի զգացմունքներ էին յուզում Բերսենեկին, երբ նա տուն էր վերադառնում նոյն երեկոյեան: Նա չէր փոշմանում որ զիտաւորութիւն ունէր ծանօթացնել Ելենային Ինսարովի հետ, նա շատ ընտելան էր համարում այն խոր տպաւորութիւնը, որ գործեցին օրիորդի վրայ իր պատմութիւնները երիտասարդ բոլշաքի մասին... միթէ ինքը չէր, որ աշխատում էր ուժեղացնել այդ տպաւորութիւնը: Բայց մի դադունի և մութ զգացմունք զաղտագողի բոյն էր գնում նրա սրտի մէջ, նրան մի վատ թախիծ էր գրկում: Բայց այդ թախիծը չարգելեց նրան վերցնել «Հօհենշտաուֆէնների Պատմութիւնը» և նա սկսեց կարդալ նոյն էջից, որի վրայ կանգ էր առել նախընթաց օրը:

XI

Երկու օրից յետոյ Խնսարովը, ինչպէս խոստացել էր, եկաւ Բերսենեկի մօտ իր ծանրոցքով: Մառայ նա չունէր, բայց առանց մէկի օգնութեան կարգի բերեց իր սենեակը, շարեց կահ-կարասիքը, սրբեց փոշին և լուացաւ յատակը: Մանաւանդ շատ քաջքնեց նա իր գրասեղանը, որ ոչ մի կերպ չէր ուղում տեղաւորուել նշանակուած անկիւնում: Բայց Խնսարովը, իրան յատուկ լուս հաստատակամութեամբ իրանն աւրաւ: Կարգի բերելով ամեն ինչ, նա խնդրեց Բերսենեկին վերցնել իրանից տասը ուրբի այս գլխից և, ղինուելով մի հաստ մահակով, գնաց տեսնելու իր նոր բնակարանի շրջակայքը: Նա վերադարձաւ մօտ երեք ժամից յետոյ: Բերսենեկը հրաւիրեց նրան ընկերանալ իր ճաշին և նա ասաց որ չի հրաժարուի ճաշել նրա հետ այսօր, բայց արդէն խօսել է տանտիրէն՝ հետ և այսուհետև նրանից պիտի ստանայ իր կերակուրը:

— Ի՞նչ էք ասում, պատասխանեց Բերսենեկը. — ձեզ շատ վատ կը կերակրեն. այդ կիներ բոլորովին չը գիտէ պատրաստել Խնչու չէք ուղում ճաշել ինձ հետ. մենք ծախսը կէս կանէինք:

— Իմ միջոցները չեն ներում ճաշել այնպէս, ինչպէս դուք էք ճաշում, պատասխանեց Խնսարովը մի հանդարտ ժպիտով:

Այդ ժպիտի մէջ կար մի բան, որ չէր թոյլ տալիս ստիպել. Բերսենեկը մի խօսք էլ չաւելացրեց: Ճաշից յետոյ նա առաջարկեց Խնսարովին տանել նրան Ստախովների մօտ. բայց նա պատասխանեց, որ ուղում է նուիրել ամբողջ երեկոն իր բօլ-դարձերին նամակներ գրելուն, ուստի խնդրում է յետաձգել Ստախովներին այցելելը մինչև միւս օրը: Խնսարովի անյողդողդ կամքը առաջուց յայտնի էր Բերսենեկին. բայց միայն այժմ, գտնուելով նրա հետ մի յարկի տակ, նա կարողացաւ վերջնականապէս համոզուել, որ Խնսարովը երբէք չէր յետաձգում տուած խոստման կատարումը: Բերսենեկին, ինչպէս մի բուն ոռւս մարդուն, այս աւելի քան գերմանական ճշտապահութիւնը սկզբում թւում էր վայրենի, նոյն իսկ մի քիչ ծիծաղելի: Բայց նա չուսող սովորեց այդ ճշտապահութեան և վերջապէս համարում էր նրան եթէ ոչ յարգելի, գոնէ շատ յարմար բան:

Իր տեղափոխութեան երկրորդ օրը Խնսարովը վեր կացաւ առաւօտեան ժամի չորսին, համարեա ամբողջ կունցօլոն ծայրէ ծայր ման եկաւ, լողացաւ գետում, խմեց մէկ բաժակ պաղ

կաթ և գործի կալաւ. իսկ գործ նա քիչ չունէր. նա սովորում էր և ուսնաց պատմութիւն, և իրաւագիտութիւն, և քաղաքական տնտեսութիւն, թարգմանում էր բօլշակական երգերը և տարեգրութիւնները, հաւաքում էր նիւթեր արեւելեան հարցի մասին, յօրինում էր ուսնաց քերականութիւն բօլշարների համար, բօլշարական քերականութիւն ուսաների համար. Բերսեննիւր մտաւ նրա մօտ և խօսք սկսեց Ֆէյերբախի մասին. Ինսարօյը լսում էր նրան ուշադրութեամբ, պատասխանում էր սակաւ, բայց խելացի կերպով. նրա պատասխաններից երևում էր, որ նա աշխատում է ինքն իրան հաշիւ տալ թէ արժէ արդեօք զբաղուել Ֆէյերբախով, թէ կարելի է առանց նրան էլ եօլայ դնալ. Բերսեննիւր յետոյ խօսք սկսեց նրա պարապմունքների մասին և հարցրեց. արդեօք նա ցոյց չի տայ մի բան. Ինսարօյը կարգաց երկու թէ երեք բօլշարական երգերի իր կատարած թարգմանութիւնը և կամեցաւ իմանալ նրա կարծիքը. Բերսեննիւր գտաւ թարգմանութիւնը կանոնաւոր, բայց ոչ բաւականաչափ կենդանի. Ինսարօյը ընդունեց այդ նկատողութիւնը. Երգերից Բերսեննիւր անցաւ Բօլշարիայի այժմեան դրութեան և այդտեղ նա առաջին անգամ նկատեց թէ ինչ փոփոխութիւն կատարեց Ինսարօյի մէջ նրա հայրենիքի մի հատ յիշատակութիւնը. ոչ թէ նրա դէմքը բոնկուեց կամ ձայնը բարձր հնչեց — ոչ. բայց նրա ամբողջ գոյութիւնը կարծես պնդանում էր և առաջ էր սլանում, չրթունքների գծագրութիւնը աւելի խիստ և անողոր էր նշմարւում, իսկ աչքերի խորքում վառւում էր ինչ որ խուլ, անշէջ կրակ. Ինսարօյը չէր սիրում երկար խօսել հայրենիքում կատարած իր ճանապարհորդութեան մասին, բայց Բօլշարիայի մասին առհասարակ յօժարութեամբ էր խօսում ամեն մէկի հետ. նա խօսում էր, չը շտապելով, թիւրքերի, նրանց ճնշումների մասին, իր հայրենակիցների վշտի և դժբախտութիւնների, նրանց⁹ յոյսերի մասին. նրա իւրաքանչիւր խօսքի մէջ լսւում էր նրա մշտական մտածողութեան նիւթ դարձած վաղեմի մի կիրքը.

«Ո՞վ գիտէ, — մտածում էր Բերսեննիւր — թիւրք աղան, երեի, սրա ձեռքով կեանքից զրկուեց հօր և մօր սպանութեան համար»¹⁰ Ինսարօյը դեռ չէր լուել, երբ դուռը բացուեց և չէմքում երևաց Շուրինը.

Նա սենեակը մտաւ արձակ-համարձակ, բարենոգ տեսքով. Բերսեննիւր, որ նրան լաւ էր ճանաչւում, իսկոյն հասկացաւ որ նրան մի ինչ-որ բան նեղում է:

— Յանձնարարւում եմ առանց արարողութիւնների, սկսեց նա դէմքի մի պայծառ և բաց արտայայտութեամբ. — իմ ազգա-